ւոր քարի մը վրայ գիր ու պատկեր յօրինել : Պօյսահայը մէկ հատիկ վարպետ մը ունեցած է, հանգուցեալ Կիւրճեան Արրաքին : — Վիմագիր կը տպագրուին հարսանեկան հրաւիրագրեր, քարտէսներ ևն. : — Վիմագրութեան արուեստի սիրուն յդացում մըն է **ԲաՀՔիի** պատկերը (1906 ին Նախիջեւան պատրաստուած) որուն գիրերուն նրբութեան ու քանձրութեան տող առ. տող ազուցուածքովը ձեւացած է անա հայազգի մեծանուն վիպասանն՝ իր կենսագրական ամբողջական գիծերով զոր կարելի է ընթեռնուլ, վրան խոշորացոյց մը բռնելով : **Հայ գիրերով շինուած** կան դեռ կենդանագիրները մեկ քանի ազգային երեւելի անձերու, «քառ-բօսքայ»-ներու վրայ վիմագիր դրոշմուած :

ՓՈՒԼ "ՇՔԵՂ ՄՊԼԵՊՐՈՒԹԵՍՆԻՑ„

Պահ մը առաջ Մեսրոպեան տառերը լեզու եկած էին՝ գիրենք վայելչացուցող մատները գտնելու համար : Պատեհ առիթն է ուրեմն ժամանակագրական կարգաւ թուելու հայերէն այն գիրքերն ու հանդէսները որոնց էջերուն մէջ շարուած մաքրատիպ գիրերն ու գեղարուեստական պատկերները պատիւ կը բերեն ստուգիւ հայկական տպագրութեան :

1733. Աստուածաշունչ (Մխիթար Աբրայ). «իսկ այժմ նոյնն լուսագոյն բդրովք, ազնուագոյն պատկերօք, գեղեցկագոյն ծաղկագրօք, զգուշագոյն սրբագրութեամբ և բազմօք ծախիւք՝ վերստին տպագրութեամբ ի լոյս ածեցեալ» : Տպ. Վենետիկ : **1838. Վայելչագրութիւն** (Հ. Աղեքս. Պալճեանց): Տպ. Վիեննա : — Կայ նաև Փարիզ տպուած Հ. Ամբր. Գալֆայեանի **Հայկական գեղագրութիւնը** (վիմագիր) : **1854. Պատմութիւն վարուց Տեառն մերոյ Յս.ի Քս.ի** (Հ. Գարբ. Այվազովսքի) : Տպ. Բարիզ : — **Արկածք Վարդայ Մամիկոնենոյ** (Հ. Սահակ Թորոնեան) : Տպ. Վիեննա : **1855-8 Մասեաց Աղաւնի**, Աւետարեր Հայաստանեայց, (Խմբ. Գ. Այվազովսքի և Ա. Գալֆայեան): Տպ. Բարիզ: **1860. Դասարան Հայկազն մանկանց** (Ճ. Արամեան) : Տպ. Բարիզ: **1879-81. Փարոս Հայաստանի** (Հրտ. Զ. Մսերեանց): Տպ. Մոսկուա : — **Խորհրդաւոր Ս. Պատարագի** : Տպ. Վիեննա (1879) : **1881. Շիրակ**, տեղագրութիւն պատկերացոյց (Հ. Դ. Ալիշան) : Տպ. Վենետիկ : — **Տելեմաք** (թրգմ. Գ. Ա. Նար Պէյ) : Բ. տպ. Բարիզ : **1883-1912. Բազմավէպ** : Տպ. Վենետիկ : (Մնացածները կենդանաբանական և բուսաբանական պատկերներու շարք մըն են, բեւեռ ուրիշ շահեկան բաներ ալ կը բովանդակեն) : **1885. Սիսուան**, համագրութիւն Հայկական Կիլիկիոյ և Լեւոն Մեծագործ (Հ. Դ. Ալիշան) : Տպ. Վենետիկ : **1887-98. Արարատ** (Հրտ. Ս. Գուլամիրեանց) : Տպ. Բերլին : **1890. Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիգրանեանց** (Հ. Գ. Մենեվիշեան) : Տպ. Վիեննա : — **Աղբիւր-Տարազ** (1890-1912) : Տպ. Թիֆլիզ : — **Այրարատ**, բնաշխարհիկ հայաստանեայց (Հ. Դ. Ալիշան): Տպ. Վենետիկ : **1892. Էջմիածնի Աւետարան**, Յովս. Սարգսովսկիի (թրգմ. Հ. Բ. Պիլգիկեան : Տպ. Վիեննա: **1893. Որ օրհնեա զայնոսիկ** (50 լեզուով), Հ. Գ. Դալէմքեարեան : Տպ. Վիեննա : — **Սիսական**, տեղագրութիւն Սիսնեաց աշխարհի (Հ. Դ. Ալիշան) : Տպ. Վենետիկ : — **Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց Եկեղ.** (Ս. Սահակ) : Տպ. Վենետիկ : — **Թատրոն** (հրտ. Աղ. Թարխանեան) : Տպ. Թիֆլիզ (1893-1903, նաև 1905, Ե. Տարի) : **1895. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց** (Հ. Յ. Տաշեան) : Տպ. Վիեննա : **1896. Հայկ Դիւցազն** (Հ. Ա. Բագրատունի) : Տպ. Վենետիկ : — **Արօրի պատկ. Օրացոյցը.** № 11: Տպ. Բագու: — **Ազգագրական հանդէս** (խմբ. Երուանդ Լալայեանց) : Տպ. Թիֆլիզ, (1896-1906) : **1898. Բանալի արքայութեան**, աղօթագիրք (Հ. Գ. Գովրիկեան) : Տպ. Վիեննա : — **«Արարատ»-ի ալբոմը** : Տպ. Բերլին (Լիբերման) : — **Անահիտ** (խմբ. Ա. Զօպանեան) : Տպ. Բարիզ (1898-1912) : **1900. Որբունի** (խմբ. Հ. Ս. Երեմեան) : Տպ. Վենետիկ : **1901. Հայապատում** (Հ. Դաւոնդ Ալիշան) : Տպ. Վենետիկ : — **Ցիւռատակարան երկիարիւրամեայ յոբելինի Մխիթ.**